

տակ, կոճղիղաւոր), դեղին Բէշէփուլան. Բարսիլուռն. լեռները կը զարդարուին Նառդուզ (Նարդէս) կոչուած գոյնզգոյն ծաղիկներով, զորս կ'ուտէ ժողովուրդը իր ունեցած քաղցրութեան համար. ձգգոգները (որոն կոճղիղաւոր եւ թելերով հիւսկէն արմատը համեղ է եւ կ'ուտուի). Բաւալուկը գետինը կը ծածկէ իր խոտեղէն տերեւներով (կեդրոնը բամպակապատ) զոր կ'ուտեն աղով կամ առանց աղի, ախորժելի է, կը խառնեն նաեւ պղղուրէ փիլաւի հետ: — Կարգաւ կը ծաղկին նշենին, կեռասներին, բալը, սալորենին, խնձորենին, տանձներին, սերկելիլը, ծիրանը, փշաւը՝ իր անուշաբոյր դեղին ծաղիկներով... եւ բոլոր Արարիկերը ծաղկազարդ դրախտ մը կ'ըլլայ: Այսպէս հետզհետէ կը բողբոջին թթենին, նռներին, ծաղկեթափ ծառերը եւ իրենց պտուղներն ցոյց կուտան, ու ժողովուրդը կը պատրաստուի նստիկի հանդէսը տօնախմբելու (խակ թութ) ըստ իր աւանդական հեթանոս սովորութեան: Այսպէս. տարեկից երիտասարդներ եւ աղջիկներ, կլայցկուած կոնքի մը մէջ, քանի մը տեսակ մանր խակ պտուղներ կը լեցնեն, սալոր, ծիրան, թութ եւ այլն, իւրաքանչիւր ոք իր աջ ձեռքի ցուցամատով եւ միջնամատով ամենաթեթեւ դրամներ (մանղըր) զգուշութեամբ շուրին երեսը կը կեցնեն, այնպէս որ յատակը չիջնէ, յետոյ չորս կողմը կը պարեն ու կ'երգեն, մինչեւ որ դրամները լողալով իրարու մօտենան եւ զիրար գրկեն. իրարու կպչող մանչ-աղջիկ դրամները՝ իրենց բախտը գտած կը համարին. եւ յիշաւ, շատ անգամ կը պատահի որ միասին ամուսնանան այս զուգադիպութենէն ծնած բնական համակրութեամբ:

(1) Խժիկը, կէս հասած թութի եղանակին հիւսնգութիւն մըն է, որմէ Արարիկերի մէջ շատեր կը վարակուին, եւ պատճառը կէս խակ թութ ուտելուն կը վերագրեն: Սակայն սխալ է: Բժշկականօրէն, եղանակի փոփոխական օգէն յառաջ կու գայ: Անխոհեմարար, օդը դեռ չկայունացած, ձմրան զգեստներն թեթեւցնելով, կը քրտնին ու կը

Իսկ այն դրամները որ չէզոք կը մնան, կը տխրին եւ խնդրինքնին անբախտ կը նըկատեն կամ դեռ բախտներնին անբանուկ: — Դարձեալ, ուրիշներ կամ վերոյիշեալ անբախտները, կանաչ դաշտի մը մէջ, երկու խոտերու զուլիսը կը կտրեն եւ արմատին հետ իրարու հետ կը կապեն դերձանով մը, եւ յաջորդ օրը երբ երկուքն ալ նոր ծիւ արձակեն՝ բախտը յաջողած կը նկատեն ու կը միխթարուին... եւ Խըժիկը⁽¹⁾ հանդէսը կը վերջանայ: — Այս աւելորդապաշտական բայց հաճելի սովորութիւնը Հայաստանի ամէն գիւղ ու քաղաք ունի, Արարիկերցիք, Մշեցիք, Վանեցիք, Բաղիշեցիք, եւ այլն:

8. — Ս. Զ Ա Տ Ի Կ

Աւագ Շաբաթ երեկոյ, հանդիսաւոր ժամերգութիւն կը կատարուի եկեղեցւոյ մէջ, տղաք ընթերցուածներ կը կարդան: Երբ կարգը Դանիէլի մարգարէի դրքին կու դայ, դրամական մրցանքի կը հանուի այս ընթերցուածը՝ (Լուս. Հայոց սովորութիւն) Խթման պատարագիչ քահանային կողմանէ, գումարով մը. ժողովուրդէն մէկը, ընդհանրապէս քաղակամները, աստիճանաբար կ'աւելցնեն գումարը, եւ ամէն անգամ աւելցնողին անունը բարձրագոյն կը յայտարարուի. «Այսինչ է՝ Փէնտին քսան ոսկի կու տայ»: Այսպէս հետզհետէ ուրիշներէն կ'աւելցուի, նախանձախնդրութիւն մը ծայր կու տայ եւ գումարը մինչեւ առասպելական բարձրութեան կը հասնի 50-100 դեղին ոսկի եւ վերջապէս միշտ հարուստ մը կը յաղթանակէ, որուն անունը մեծ գովեստներով կը յայտարարուի. «Այսինչ է՝ Փէնտին ...

մըսին եւ կուրծքերնին բռնուելով կը խժամ. այսինքն կողորդներէն խժ-խժ ձայներ կը լսուին: Ծանր պաղաւթները շատ անգամ նոյնիսկ ծանր թոքատապի կը փոխուի եւ մահ կը պատճառէ: Յանգանքն անխոհեմութեան է եւ ոչ թէ կէս-խակ թութ կամ պտուղներ ուտելուն:

եկեղեցւոյ մեծ բարերարը հարիւր դեղին ոսկիի առաջարկով յաղթանակ տարաւ. Աստուած բանն ու գործը աւելցնէ. ընտանիքն ու զաւակները օրհնէ եւ թոռներուն թոռը տեսնէ: ժողովուրդը միաձայն. «Ամէն» կը պատասխանէ, եւ է՝ Փէնտին մանչը «Ընթերցուած» ի Դա՝նիէլէ մարգարէէ՝» կը սկսի գումարթ ձայնով: Այս պահուս Աւագ խորանին վարագոյրին ետեւ ջահերն ու մոմերը կը վառուին. պատարագիչ քահանան եւ սարկաւադները կը զգեստաւորուին: Երբ Սեղ-րաք, Մխաբ, Արեղնադովի «Ոչինչ է պիւրաք, Միւսն է Օրհնեցէ՛ք» բարձրագոյն կը վերջացնեն իրենց գեղեցիկ ձայնով, վարագոյրը կը բացուի եւ Ս. պատարագը կը սկսի. «Քրիստոս յարեա՛լ ի մեռելոց» ժամամուտը կ'արտասանուի եւ ժողովուրդը միաձայն կը պատասխանէ. «Օրհնեա՛լ է Յարութիւնն Քրիստոսի»: «Օրհնեալ եղերուք»էն վերջ բազմութիւնը դուրս կը խուժէ հեղեղօրէն, ուրախ, զըւարթ եւ բակին մէջ կարմիր հաւկիթները կը կոտորուին եւ ուտելով տուն կը վերադառնան, թէեւ դեռ հաւկիթ ուտելու եւ պահքը աւերելու հրաման չունին:

Երեկոյեան ընթերիքի ժամանակ, Հայ կաթողիկէները պահքը կը լուծեն կթեղէն ուտելիքներով:

Մինչդեռ Լուսաւորչականները Ձատկի օրը կը լուծեն պահքը:

Կէսօրուան չքեղ ու ճոխ ճաշէն վերջ, ամէնքը իրարու տուն այցի կ'երթան «Քրիստոս յարեալ» բարեմաղթելու, որուն կը պատասխանեն. «Օրհնեա՛լ է Յարութիւն Քրիստոսի»: Այս այցելութիւնը Շաբաթ երեկոյ կը վերջանայ:

Ձատկի յաջորդող Երկուշաբթի օրը Մեռելոց է. հաւատացեալները խոռոներամ գերեզմանատուն կը դիմեն եւ իրենց սիրակցորդ ննջեցեալներուն գերեզմանները օրհնել կու տան՝ տեսակ տեսակ աղնիւ, անուշաբոյր խոնկեր վառելով, որոնց ծուխերն երկինք կը բարձրանան աղօթքներու եւ արցունքներու հետ. հողիներու փրկութեան համար ագապ եւ դրամ կը բաշխեն աղքատներուն. հոն աքաղաղ եւ դառնուկներ կը զոհեն գերեզմանատան դրան առջեւ, անոնցմով պլզուրէ փիլաւ կ'եփեն եւ մտախոն կ'ուտեն եւ ամէնուն կը բաժնեն իրեւ հոգեհաց: Երեկոյեան տուն կը վերադառնան եւ յաջորդ օրը կը սկսին բնականոն կեանքը՝ աւելի եռանդուն թափով ու կանոնաւորութեամբ:

Հ. ԱԼԵՔՍԻՍ ՅՈՎՍԵՓԵԱՆ

(Շարունակելի)